



# Ազդարարության Trumpet's Sound փող

56-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱՆԻԱ  
ՆՈՅՆԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025





# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: [pastor@armenianbrethren.org](mailto:pastor@armenianbrethren.org)  
URL: [www.acmaust.org](http://www.acmaust.org)

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեր Հիսուսին տրված անունները ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Մեղր և ոսկի (1) ..... Արեն Բահադուրյան

Էմմանուել ..... Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը (3) ..... Դոն Սթորմր

Ինչի՞ց է վախենում Սատանան. .... Քաղվածք

Քննեցե՛ք ձեր ճանապարհները ..... Դոկտ.՝ Դանիել Ջեյմս

## Տեր Հիսուսին տրված անունները

«Ուստի Տերն Ինքը քեզ նշան կտա. Ահա կույսը կհղիսանա և մի որդի կծնի և նրա անունը կկոչի Էմմանուել» (Եսայի 7:14):

«Քանզի մեզ համար մի մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց. և իշխանությունը նրա ուսերի վրա է լինելու. և նրա անունը կոչվելու է Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենական Հայր, Խաղաղության Իշխան» (Եսայի 9:6):

**Փրկիչ:** Եթե նայենք այսօրվա աշխարհին, կտեսնենք, թե որքան մեծ է մեր Փրկչի կարիքը: Այն ժամանակ, երբ Հիսուսը եկավ, աշխարհը Փրկչի կարիք ուներ, և այսօր այդ կարիքը էլ ավելի մեծ է: Ինչպես Նոյի օրերին, ինչպես Մոդոմի և Գոմորի դատաստանի ժամանակ, այսօր էլ նույնը չէ՞: Մենք այնքան ենք հեռացել աստվածային ճանապարհից, բայց փրկության դուռը դեռ լայնորեն բաց է բոլոր նրանց համար, ովքեր կզոհան:

**Մեսիա:** Նազովրեցի Հիսուսը խոստացված Մեսիան է: Նա Աստծո ճշմարիտ Որդին է, Երրորդության Անձերից մեկը: Աստված մարդացավ՝ կորած մեղավորներին հավիտենական կյանք տալու համար:

**Տերը:** Հիսուս Զրիստոսը մեր գերիշխան Տերն է: Նրա առաջ ամեն ծունկ պիտի խոնարհվի և ամեն լեզու պիտի խոստովանի, որ Նա Տերն է: Որպես հավատացյալներ՝ մենք այսօր երկրպագում ենք Նրան՝ առանց տեսնելու: Մեր աղոթքներն ուղղում ենք Նրան և ձգտում ենք ճանաչել Նրա Տերությունը մեր կյանքում: Շուտով, երբ հավերժության մեջ միավորվենք, կտեսնենք Նրան Իր փառքի մեջ՝ շրջապատված հրեշտակներով, և բոլորս կխոնարհվենք ու կերկրպագենք Նրան:

**Սքանչելի, Խորհրդական:** Շատերը մեծ գումարներ են ծախսում խորհրդատուների համար, բայց իրական Սքանչելի խորհրդատուն Տեր Հիսուսն է: Նա առաջնորդում է մեզ Իր Սուրբ Հոգով, ցույց է տալիս դեպի Երկինք տանող ճանապարհը, պահում և ուղղորդում է դժվարին իրավիճակներում: Նա երբեք չի քնում և չի նիրհում:

**Հզոր Աստված:** Տեր Հիսուսը գոյություն ուներ ամեն ինչից առաջ և մասնակցեց տիեզերքի ստեղծմանը՝ Հոր հետ միասին ծրագրելով ամեն

բան: Երբայեցիներին ուղղված նամակի 1-ին գլխում գրված է. «Աստված, որ շատ անգամներ, շատ կերպերով սկզբից խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, այս վերջին օրերում մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով, Ում ամեն բանի ժառանգ կարգեց, Ում միջոցով նույնպես աշխարհներն ստեղծեց»: Նա ամեն ինչի ժառանգորդն է և նստած է Հոր աջ կողմում:

**Հավիտենական Հայր:** Որոշ թարգմանություններում գրված է. «Հայրը, որ հավիտյան ապրում է»: Նա եղել է, կա և լինելու է: Նա հավիտենական է, և Նա է, որ սիրեց մեզ ու տվեց Իր կյանքը մարդկության փրկության համար: Նա դարձավ մեր և Աստծո միջև Միջնորդ, քանի որ կա միայն մեկ անուն, որով կարող ենք փրկվել՝ Հիսուսի անունը:

**Խաղաղության Իշխան:** Նա խաղաղության միակ աղբյուրն է: Աշխարհը կարող է խոսել խաղաղության մասին, բայց իրական խաղաղությունը միայն Քրիստոսով է: Երբ գղջում ենք և ընդունում Տեր Հիսուսին մեր սրտերում, խոր խաղաղություն է գալիս և հանգստացնում մեր ներքը: Այդ խաղաղությունը կախված չէ արտաքին հանգամանքներից. դա Նրա ներկայությունն է մեր կյանքում, որը զգում ենք ամեն օր:

**Էմմանուել:** «Աստված մեզ հետ»: Ինչպիսի՜ օրհնություն է ունենալ մի Աստված, որը սիրում է մեզ և միշտ մեզ հետ է ամեն օր, ամեն պահ: Նա ժողովրդի հետ էր Կարմիր ծովը անցնելիս, Դանիելի հետ՝ առյուծների գուբում, Մեղրակի, Մեսաքի և Աբեղնագովի հետ՝ կրակի հնոցում: Այսօր նույնպես Նա մեզ հետ է մեր դժվարությունների, տառապանքների և հիվանդությունների ժամանակ:

Այո՛, Աստված մեզ հետ է՝ անկախ ամեն ինչից, և Սուրբ Ծնունդը մի առանձնահատուկ ժամանակ է մեզ համար և բոլոր նրանց համար, ովքեր հավատում են, քանի որ այդ օրերին հիշում և նշում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ֆիզիկական ծնունդը:

Հ. Գ.



## Մեղր և ոսկի (1)

### Սաղմոս 119

**Մ**եղր և ոսկի: Աստվածաշունչը մեղրից քաղցր է և ոսկուց թանկ: Ես Սաղմոս 119-ի այս խորհրդածությունը անվանում եմ «մեղր և ոսկի», քանի որ իմ նպատակը պարզապես Սուրբ Գրքի ոգեշնչման, ճշմարտացիության կամ հեղինակության վերաբերյալ վարդապետական կետերի ուսումնասիրություն առաջարկելը չէ: Այս ամենը նշված է այս Սաղմոսում, և մենք դրանց անդրադառնալու ենք: Բայց իմ նպատակն ավելի անձնական և հովվական է: Շատ քրիստոնյաների համար Աստվածաշունչը ո՛չ քաղցր է, ո՛չ էլ թանկարժեք: Ես նույնպես եղել եմ այնտեղ: Դրա փոխարեն՝ Աստվածաշունչը մենք համարում ենք ձանձրալի գործ, իսկ ընթերցումը՝ տնային հոգևոր աշխատանք: Մենք գալիս ենք, որովհետև ավելի շատ «պարտավոր ենք», քան «ուզում ենք»:

Եկե՛ք անկեղծ լինենք: Արդյո՞ք Աստվածաշունչը հիմա ձեզ համար մեղրի պես քաղցր է և ոսկուց ավելի թանկ: Մոտեցե՛ք Տիրոջը բաց սրտով: Մի՛ հեռանաք: Կարծում եմ՝ մենք հույս ունենք այս առումով:

103-րդ համարն ասում է. *«Որքան՝ քաղցր է քո խոսքն իմ քիմքին, մեղրից էլ ավելի՝ իմ բերանին»*: Մենք սիրում ենք մեղր, այնպես չէ՛: Երբ մտածում ես մեղրի մասին, ի՞նչ խմորեղեն է գալիս մտքդ: Գուցե ինչ-որ բան, որին հիմա կարոտում ես, ինչ-որ բան, որը վայելում ես որպես քաղցրավենիք: Այսպե՛ս ես մոտենում Սուրբ Գրքին: Կարոտո՞ւմ ես և վայելո՞ւմ ես այն: Եթե ոչ, շարունակի՛ր կարդալը: Մենք քաղցրությունը չենք գտնի փակ Աստվածաշնչով: 103-րդ համարը հաջորդող համարները խոսում են Խոսքը պահելու, չարից հեռու մնալու և Խոսքից չհեռանալու մասին: Մենք զգում ենք քաղցրությունը, երբ սրբությանը և հնազանդությանը քայլում ենք Տիրոջ առջև: Արդյո՞ք դա արժեք է: Այո՛, իհարկե: Որովհետև սա մեղրից քաղցր է: 102-րդ համարում մենք տեսնում ենք, որ Աստված Ինքը սաղմոսերգունիս սովորեցրել է. *«Քո վճիռներից չեմ հեռանում, որովհետև դու սովորեցնում ես ինձ»*: Աստվածաշնչի քաղցրությունը իմանալը մեկ բան է, այն զգալը՝

մեկ այլ բան: Ջոնաթան Էդվարդսն ասել է. «Այսպիսով, տարբերություն կա այն կարծիքի միջև, որ Աստված սուրբ է և ողորմած, և այդ սրբության ու շնորհի գեղեցկության և գեղեցկության զգացողություն ունենալու միջև: Տարբերություն կա այն բանական դատողության միջև, որ մեղրը քաղցր է, և դրա քաղցրության զգացողությունն ունենալու միջև: Մարդը կարող է ունենալ առաջինը, որը չգիտի, թե ինչ համ ունի մեղրը, բայց մարդը չի կարող ունենալ երկրորդը, եթե իր մտքում չունի մեղրի համի մասին պատկերացում»: Մեծ տարբերություն կա Աստծո սուրբ և ողորմած լինելու մասին կարծիք ունենալու և իսկապես դրանք քո կյանքում փորձառելու միջև: Մենք կարող ենք մեր մտքում իմանալ, որ Աստվածաշունչը քաղցր է, բայց անձամբ այդ քաղցրությունը ճաշակելը բոլորովին այլ բան է:

Եվ այսպես, եթե հիմա ձեզ հոգևորապես անկայուն եք զգում, և ձեր սիրտը մռայլ է, կարո՞ղ եք հիշել անցյալի մի ժամանակ, երբ Սուրբ Գիրքը քաղցր է եղել ձեզ համար: Որտե՞ղ էիք և ի՞նչ էիք ուսումնասիրում, ո՞ր հատվածը կամ թեման: Արդյոք դա անձնական ուսումնասիրության ժամանակ էր, համաժողովի՞, թե՞ սովորական կիրակի օրվա ուղերձի: Եվ քաջալերվե՞ք, Աստված կրկին քաղցր կդարձնի սա ձեզ համար: Իսկ հիմա խոսենք ոսկու մասին: 14-րդ համարն ասում է. *«Ուրախանում եմ քո վկայությունների ճանապարհով, ինչպես ամեն տեսակ հարստությանը»*: Աստվածաշունչը թանկարժեք համարելը ակընթափթային բան չէ: Նախորդ համարներում խոսվում էր դրանց մասին խորհրդածելու և սրտում թաքցնելու մասին: Մտքով ուսումնասիրելը և սրտում պահելը Խոսքը թանկ է դարձնում հավատացյալի համար: Մտածե՞ք այն անմիջական ոգևորության մասին, որն առաջանում է գլխավոր մրցանակը շահելիս: Գուցե դուք ենթադրում էիք, որ եթե հաղթեք, ձեր խնդիրները կլուծվեն, ձեր բոլոր կարիքները կբավարարվեն: Բայց այստեղ՝ Աստծո Խոսքում, մենք գտնում Տիրոջ համար ապրելու համար մեզ անհրաժեշտ բոլոր միջոցները: Կա մի հաճույք, որը չի մարելու: Նույնիսկ ամենադժվար օրերին, դեռևս կա իսկական և խորը բավարարվածություն այն բանի համար, ինչ Աստված մեզ հայտնել է Իր Խոսքում: Հարստությունը կարող է կորցնել իր արժեքը կամ իլվել մեզանից, բայց ոչ Աստծո Խոսքը: 162-րդ համարում ասվում է. *«Ես գնձում եմ քո խոսքով, ինչպես մեկը, որ շատ ավար է գրտնում»*:

Մտածե՛ք հաղթանակի պտուղների մասին: Պատերազմն ավարտվել է, և զինվորները հավաքում են ավարը: Մեր պատերազմն ավարտվել է. հիմա մենք հավաքում ենք պատերազմի ավարը: Հիսուսը հաղթել է, և երկնային վայրերի բոլոր հոգևոր օրհնությունները մերն են Նրա մեջ: Մտածե՛ք հզոր մարդկանց բոլոր մեծ նվաճումների մասին: Մտածե՛ք, թե ի՛նչ հողեր և հարստություն են ունեցել հաղթողները, երբ մարտերն ավարտվել են:

Բայց այստեղ զանձը շատ ավելին է՝ հարուստ, չպակասող և հավիտենական: Մփրջո՞ւմ մի անգամ ասել է. «Օրենքն ավելի լավ է, քան ոսկին ու արծաթը, քանի որ դրանք կարող են գողացվել մեզանից, բայց Խոսքը՝ ոչ: Դրանք թռչում են, բայց Աստծո Խոսքը մնում է»: 72-րդ համարում ասվում է. «*Ըո բերանի օրենքն ինձ համար բարի է ավելի, քան հազարավոր ոսկի ու արծաթ*»: Նա չի ասում «հավանում եմ», այլ «ավելի բարի է»: Ինչո՞ւ է այն ավելի թանկարժեք: Որովհետև հեղինակը անցել էր խորը տառապանքի միջով: Նա թափառում էր ու թափառում, բայց այդ տառապանքի շրջանում և դրանից հետո նա ավելի հաստատվեց: Նա քայլում էր հնազանդությամբ: Դա լավ էր, որովհետև Աստված բարի է: Ուշադրություն՝ ն դարձրեք, թե քանի անգամ է «բարի» բառը կրկնվում: Նա շատ բան կորցրեց տառապանքի մեջ, բայց հոգևորապես շատ ավելին ձեռք բերեց: Եվ այսպես, Խոսքը թանկ էր նրա համար, նույնիսկ այդ ամենի մեջ: Գուցե նա կարդացել էր Աստծո Խոսքը և հանկարծ հայտնաբերել այդպիսի մեծ ուսմունք Աստծո սրտի, գործի և նպատակի մասին: Շատ ավելի լավ, քան ոսկին: Ավելի լավ, քան ազատությունն ու վերականգնումը, ավելի լավ, քան տառապանքի ավարտը: Խոսքն այդքան թանկ է, ավելի, քան իմ ունեցած ամեն ինչ: Իրականում՝ ավելի թանկ է, քան իմ կյանքը: Ես տառապանքի մեջ եմ, բայց այդ տառապանքի մեջ ես հնարավորություն ունեմ լինելու Խոսքի մեջ՝ այն սովորելու և վայելելու: Տառապանքը թանկարժեք և անզին Խոսքը սովորելու առիթ հանդիսացավ, և դա լավ էր: Մենք սա կրկին տեսնում ենք 127-րդ համարում. «*Դրա համար էլ ոսկուց և ազնիվ ոսկուց ավելի ես քո պատվիրաններն եմ սիրում*»: Խոսքն անում է այն, ինչ ոսկին չի կարող անել: Մեզ փող է պետք շաբաթը անցկացնելու համար, ավելին՝ մեզ պետք է Խոսքը: Մինչդեռ փողը ուժ և հնարավորություն է բերում, Աստծո Խոսքը գործում և իրականացնում է շատ ավելին: 111-րդ համարում ասվում է.

«Ես քո վկայությունները ժառանգեցի մինչև հավիտյան, որովհետև նրանք իմ սրտի ցնծությունն են»։ Տեսնո՞ւմ եք թանկարժեք Խոսքի և մարդու սրտի ուրախության միջև շարունակական կապը։ Նա ժառանգել է այնպիսի հարուստ ուսմունք, որին կկառչի Իր սիրտը հնազանդվելու համար» (112-րդ համար)։

Երեք արագ դիտարկում և մի քանի եզրափակիչ հարցեր։ Նախ՝ չափից շատ մեղրը լավ բան չէ, իսկ չափից շատ ոսկին խնդիրներ ու ցավ է բերում։ Դուք չեք կարող բավարարվել Աստծո քաղցր և թանկարժեք Խոսքով։ Այդպես միշտ կլինի։ Ժամանակի ընթացքում այն չի դառնա անհամ։ Երկրորդ՝ ապագայում սա լավ և օգտակար կլինի ձեզ համար։ Սա հասունություն է բերում։ Այն, թե ինչպես եք մոտենում և վարվում Աստվածաշնչի հետ հիմա, կորոշի, թե որտեղ կլինեք հոգևորապես առաջիկա տարիներին։ Այս քաղցր Խոսքը հավատարմորեն կարդալը և դրանով սնվելը շատ լավ և օգտակար կլինի առաջիկա տարիներին և սերունդների համար։ Աստծո տված կյանքի և օրերի լավ տնտեսներ լինելու համար մի՛ շեղվեք ճանապարհից։ Մտածե՛ք այն աստվածավախ կյանքի մասին, որը ցանկանում եք ունենալ։ Այսօր դիմե՛ք Խոսքին։

Վերջապես, և սա ճշմարիտ է, այն իսկապես քաղցր է և թանկարժեք, որովհետև սա Աստծո Խոսքն է։ Սա ոգեշնչված է, այն Աստծո մտքից և սրտից է ձեզ և ինձ համար։ Այն իսկապես լավ է և իսկապես ճշմարիտ։ Այն հզոր է, թարմացնող և ամեն օր օգտակար։ Այն կենդանի է։ Երբ դուք հավատարմորեն, խոնարհաբար և անկեղծորեն գալիս եք բաց սրտով, դուք կարող եք ճաշակել և համոզվել, որ սա քաղցր է և թանկարժեք։

Ո՛ր եք գտնվում։ Արդյո՞ք Խոսքը քաղցր ու թանկարժեք եք համարում։ Արդյո՞ք չափազանց հեշտությամբ եք բավարարվում ու շեղվում էժանազին ու աննշան բաներից։ Արդյո՞ք ձեր անձը այնքան լիքն է անկարևոր բաներով, որ տեղ չունեք լավագույնի համար։ Ազնի՛վ եղեք Աստծո հետ։ Մտածե՛ք, թե ինչ սխալներ են եղել ձեր սրտում։ Օգնություն խնդրեք։ Կրկին ստացե՛ք Նրա շնորհը։

Խնդրե՛ք Նրան, որ ձեր աչքերում Սուրբ Գիրքը դարձնի ավելի քաղցր ու թանկարժեք, քան որևէ այլ բան։ Խնդրե՛ք Նրան անել այն, ինչ միայն Նա կարող է անել։ Եվ Նա կանի դա։ Սա է, ինչ Նա ուզում է

ձեզանից, և Նա կաշխատի ձեր սրտում՝ դրան հասնելու համար: Ես խրախուսում եմ ձեզ դանդաղ և ուշադիր կարդալ Սաղմոս 119-ը: Կարդացե՛ք այն կրկին ու կրկին, աղոթե՛ք նրանում գրված խոսքերով ձեր սեփական սրտի համար: Աղոթե՛ք, որ այն լինի իսկապես քաղցր և թանկարժեք, ինչպես մեղրն ու ոսկին:

Արեն Բահադուրյան



## Էմմանուել

Եսայի 9:2-7

**Ե**թե ամբողջ մարդկությանն ուղղված խիստ կարևոր պատգամ ունենաս, ինչպե՞ս կփոխանցես այն. բարձր, թնդացող ձայնով և երկնքի՞ց, թե՞ միանգամից հեռուստաալիքներով կհեռարձակես:

Չգիտեմ, թե ինչպես կանես դա, բայց գիտեմ, թե Աստված ինչպես արեց: Նա իր կարևոր պատգամն ուղարկեց Անձի միջոցով, որը ծընվեց գոմում, գամվեց խաչին, հետո հարություն առավ: Հիսուսն է Աստծո պատգամը. *«Սկզբում էր բանը, և բանն Աստծո մոտ էր. և բանն Աստված էր: Եվ բանը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ, և նրա փառքը տեսանք՝ ինչպես Հորից եղած միածին փառք՝ շնորհքով ու ճշմարտությունով լիքը»* (Հովհ. 1:1, 14):

Քրիստոսը Բեթղեհեմից առաջ էլ կար: Հովհ. 8:58-ում Քրիստոսն ասում է. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Աբրահամի լինելուց առաջ ԵՄ ԵՄ»*: Հիսուսը մինչև մարմնով հայտնվելը հայտնվում է Աստվածաշնչի 1-ին համարում, հայտնվում է ողջ Հին Կտակարանում:

«Նա մարմնացավ» արտահայտությունը Սուրբ Ծնունդի իսկական նշանակությունը հասկանալու բանալին է: Քրիստոսից 760 տարի առաջ Եսայի մարգարեն հստակորեն սահմանազատել է. *«Որովհետև մեզ համար մի մանուկ ծնվեց, մեզ մի Որդի տրվեց, և իշխանությունը կլինի նրա ուսի վրա...»* (Եսայի 9:6): Մանուկ ծնվեց, մեզ Որդի տրվեց:

Աստված Եսայուն ցույց տվեց ապագան և աշխարհի մարդկանց, որոնք երկար ժամանակ քայլում էին խավարի ու մահվան ստվերի մեջ: Հանկարծ նրանք մի մեծ լույս տեսան, որը նրանց ազատելու էր ֆիզիկական և հոգևոր գերությունից՝ քանդելով այդ կապանքները.

*«Խաղաղում գնացող ժողովուրդը մեծ լույս տեսավ, մահվան ստվերի երկրում բնակվողների վրա լույս ծագեց: Որովհետև մեզ համար մի մահուկ ծնվեց, մեզ մի Որդի տրվեց, և իշխանությունը կլինի նրա ուսի վրա, և նրա անունը կկոչվի Սքանչելի Խորհրդական և Հզոր Աստված, Հավիտենականության հայր, Խաղաղության իշխան»* (Եսայի 9:2, 6):

Մատթ. 1:23-ում ուղղակիորեն մեջբերված է Եսայի 7:14-ը. *«Ահա կույսը կհղիանա և որդի կծնի, և նրա անունը Էմմանուել կկանչեն, որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ»:*

Էմմանուել բառը հստակորեն նկարագրում է Քրիստոսի աստվածությունը: Եկեք դիտարկենք մյուս չորս անունները, որոնք վերագրվում են Բեթղեհեմի Մանկանը:

Սքանչելի Խորհրդական (եբրայերենում՝ Pele Yoetz). Քրիստոսը ոչ թե մեր դատավորն է, այլ խորհրդատուն ու պաշտպանը:

Հզոր Աստված (եբրայերենում՝ El Gibbor). Հիսուսին տրվում է Աստված անվանումը:

Հավիտենականության Հայր (եբրայերենում՝ Abhi Ad). բառացիորեն թարգմանվում է հավիտենականության հայր:

Խաղաղության Իշխան (եբրայերենում՝ Sar Shalom). «Shalom»-ն ավելին է, քան պատերազմի բացակայությամբ խաղաղությունը: Այն նշանակում է բարեկեցություն, բարգավաճություն, ներքին (հոգու) խաղաղություն և խաղաղություն Աստծո հետ:

Աստված Իր Որդու անձի միջոցով մարմնացավ և այս աշխարհ եկավ որպես մի աղքատ, խոնարհ երեխա, որպեսզի աշխարհը փրկի:

Դու արդեն գտն՞ել ես Խաղաղության Իշխանին: Եթե գտել ես, ուրեմն ցնձա՛ր և տոնի՛ր, որովհետև իսկական հավիտենական կյանք ես գտել:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

## Տեր Հիսուս Բրիստոսի երկրորդ գալուստը

### 3. Բրիստոսի ատյանը

**Ս**ուրբ Գրքում կարդում ենք գալիք երեք դատաստանների մասին: Մատթ. 25:31-46-ը խոսում է կենդանի ազգերի դատաստանի մասին, որոնք կհավաքվեն Մարդու Որդու առջև, երբ Նա գա Իր փառքով սուրբ հրեշտակների հետ: Սա ենթադրում է, որ սա կլինի դատաստան, որը տեղի կունենա երկրի վրա՝ Հազարամյակի թագավորության հաստատման ժամանակ:

Հայտ. 20:11-15-ը խոսում է սպիտակ մեծ գահի մասին, որտեղ մեռելները՝ թե՛ փոքր, թե՛ մեծ, կանգնած են Աստծո առջև, և մարդիկ կդատվեն որոշակի գրքերով, որոնք բացված են նրանց առջև: Այս գրքերից բոլորը, բացի մեկից, յուրաքանչյուր մարդու արարքների մասին գրառումներ են: Սակայն մյուս գիրքն ավելի կարևոր է դատաստանի մեջ, քանի որ դա Կենաց գիրքն է: Եթե մարդու անունը գրված չէ այդ գրքում, նա կնետվի Կրակե լիճը: Պատժի խստությունը որոշվում է մյուս գրքերում գրվածի հիման վրա. մարդիկ կդատվեն իրենց գործերի համաձայն: Այլ կերպ ասած, գրքերում գրվածը կօգտագործվի մարդու դատաստանի խստությունը որոշելու համար:

Սակայն Սուրբ Գիրքը նաև սովորեցնում է մեկ այլ դատաստանի մասին: Դա Բրիստոսի ատյանն է: Կորնթոսի հավատացյալներին գրելիս Պողոսն ասաց. *«Զանի որ մենք բոլորս պիտի ներկայանանք Բրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով արածների հատուցումը՝ թե՛ բարի և թե՛ չար»* (Բ Կորնթ. 5:10): Ի՞նչ համատեքստում է նա անում այս հայտարարությունը:

Բ Կորնթ. 5-րդ գլխի սկզբում Պողոսը մեր ներկա մարմինը համեմատում է այն հավիտենական տան հետ, որը մի օր մենք կունենանք երկնքում, մի բան, որը Տեր Հիսուսը գնացել է մեզ համար պատրաստելու: Մինչև այդ վայր հասնելը մենք քայլում ենք հավատքով և ձգտում ենք հաճելի լինել Տիրոջը, քանի որ գիտենք՝ մի օր կկանգնենք Բրիստոսի ատյանի առջև:

Պողոսը շատ սթափեցնող մեկնաբանություն ունի Քրիստոսի աստ-  
յանի մասին: Հնարավոր է, որ շատ հավատացյալներ լուրջ չեն մտա-  
ծում այն մասին, ինչ մեզ ասվել է: Նրանք կյանքի ընթացքում ավելի  
շատ մտահոգված են այս կյանքի հոգսերով, քան մեր Տիրոջն ու  
Փրկչին հավատարմորեն ծառայելով: Սակայն 10-րդ համարի ուղերձը  
շատ պարզ է. մենք բոլորս կհայտնվենք Քրիստոսի աստյանի առջև:  
Իսկ պատճառը: Որպեսզի ստանանք մարմնով կատարված բաները՝  
համաձայն մեր արածների՝ լավ, թե վատ: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր  
վերաբերմունքը: Իմանալով Տիրոջ վախը (այսինքն՝ մենք գիտենք, թե  
ինչ է նշանակում վախենալ Տիրոջից)՝ մենք ձգտում ենք համոզել  
մարդկանց: Մենք ուզում ենք, որ նրանք հավատան Ավետարանին:  
Ակնհայտ է, որ Քրիստոսի աստյանը լուրջ իրադարձություն կլինի:

Ա Կորնթ. 3-րդ գլխում Պողոսը խոսում է նաև այն գնահատականի  
մասին, որը Աստված կտա մեր կյանքին և աշխատանքին: Այժմ մենք  
բոլորս Աստծո համագործակիցներն ենք. մենք ծառայում ենք Նրա  
ղեկավարության ներքո: Մենք նաև Նրա դաշտն ու Նրա շինությունն  
ենք՝ տեղական եկեղեցին, և որպես համագործակիցներ՝ մենք ավե-  
լացնում ենք այդ շինությանը: Սակայն մենք պետք է գզույշ լինենք, թե  
ինչպես ենք կառուցում և լրացումներ կատարում տեղական եկեղե-  
ցուն, քանի որ կգա մի օր, երբ մեր աշխատանքը կգնահատվի:

Պողոսը կարող էր ասել, որ հավատարմորեն դրել էր Կորնթոսի  
եկեղեցու հիմքը. նա լավ էր սկսել աշխատանքը և այն դրել ամուր  
հիմքի վրա: Տեղական եկեղեցու հիմքը Հիսուս Քրիստոսն է. այլ հիմք  
չկա: Պողոսը քարոզել էր Հիսուս Քրիստոսի և Նրա խաչված լինելու  
մասին: Մյուսներն այժմ ավելացնում էին նրա սկսած գործը: Սակայն  
յուրաքանչյուր մարդ լուրջ պատասխանատվություն ունի ապահովե-  
լու, որ շենքին ավելացվածը պատրաստված լինի լավագույն նյութե-  
րից և լավ կառուցված լինի: Դա պայմանավորված է նրանով, որ գա-  
լիս է մի օր, երբ տեղական եկեղեցու մեջ ու եկեղեցու համար մեր  
կատարած աշխատանքը քննվելու է: Որոշ մարդիկ շենքին ավելացրել  
են թանկարժեք նյութեր՝ ոսկի, արծաթ, նաև թանկարժեք քարեր: Այս  
հավատացյալները կպարզևատրվեն: Բայց նրանք, ովքեր անփույթ են  
եղել իրենց աշխատանքում և ավելացրել են փայտ, խոտ և եղեգ, կտես-  
նեն, թե ինչպես է իրենց աշխատանքը այրվում կրակի մեջ: Այն, ինչ

մի ժամանակ տպավորիչ էր թվում, կանհետանա որպես մի բան, որում Աստծո համար ոչինչ չկար: Այն մարդը, ով լավ է աշխատել և արժեքավոր բան է արել, կստանա պարգև. նա, ով երկարատև արժեքավոր ոչինչ չի ստեղծել, կորուստներ կկրի, նույնիսկ եթե *«Ինքը կփրկվի, բայց կլինի այնպես, ասես կրակի միջով է անցել»*:

Այս ամենի լրջությունը երևում է 16-17-րդ համարներում: *«Չգիտե՞ք, որ դուք Աստծո տանար եք, և Աստծո Հոգին բնակվում է ձեր մեջ: Եթե մեկն Աստծո տանարն ապականի՝ Աստված էլ նրան կկործանի, որովհետև սուրբ է Աստծո տանարը, որ դուք եք»* (Ա Կորնթ. 3:16-17):

Մի օր մեր աշխատանքը Տեր Հիսուսի համար կգնահատվի: Ի՞նչ ենք անում, որպեսզի մեր աշխատանքը չվերածվի ծխի: Ի՞նչ ենք անում, որպեսզի Նա մեզ պարգևատրի հավատարիմ ծառայության համար:

Դոն Սթոքմըր

## **Ինչի՞ց է վախենում Սատանան**

**Ս**ատանան աղոթքից է վախենում: Պատկերացրե՛ք այս տեսարանը: Նա ռազմավարական ժողովի ընթացքում նստած էր հետևվում: Տասից ավելի դևեր հավաքվել էին՝ մի ամրակուռ սրբի կյանքի մասին տեղեկատվություն լսելու:

- Նա չի սայթաքի, - գանգատվեց Սատանայի անշնորհք գործակալը: - Ինչ էլ որ անեմ, նա Աստծուց չի հեռանում:

Դևերը սկսեցին առաջարկներ անել.

- Վերցրո՛ւ նրա սրբությունը, - ասաց մեկը:

- Փորձեցի, - պատասխանեց չար ոգին, - բայց նա շատ բարեպաշտ է:

- Վերցրո՛ւ նրա առողջությունը, - պնդեց մյուսը:

- Արեցի՛, բայց նա հրաժարվեց գանգատվել կամ տրտնջալ:

- Վերցրո՛ւ նրա ունեցվածքը:

- Կատակո՞ւմ ես: Այդ մարդու բոլոր ունեցվածքն ու գույքը վերցրել եմ. նա դեռ ուրախ տրամադրություն ունի:

Մի քանի վայրկյան ոչ ոք չխոսեց: Վերջապես սենյակի հետևից սլացավ Սատանայի ցածր ու ծանր ձայնը: Բոլոր ներկաները շրջվեցին, երբ ընկած հրեշտակը կանգնեց: Նրա տխուր դեմքն ուրվագծվում էր սև գլխարկի ստվերում, իսկ երկար թիկնոցը ծածկում էր մարմինը: Նա բարձրացրեց իր ոսկրոտ ձեռքը և ասաց իր կարծիքը.

- Պետք է նրանից ամենաթանկագին բանն առնես:

- Ի՞նչ է դա, - հարցրեց նրա ստորադասը:

- Պետք է աղոթքը վերցնես:

Սատանան ամենաշատը ծունկի եկած հավատացյալից է վախենում:

*«Բոլոր աղոթքներով ու աղաչանքներով միշտ Հոգով աղոթելով ու, հենց այս բանում, բոլոր սրբերի համար կատարյալ հարստությունք և աղաչանքներով արթո՛ւն հսկելով» (Եփես. 6:18):*

*«Արդարի ջերմեռանդ աղոթքը մեծ գորություն ունի» (Հակ. 5:16բ):*

Թարգմանիչ Ռ. Դ.

## **Քննեցե՛ք ձեր ճանապարհները**

**«Այսպես է ասում Չորաց Տերը. «Քննեցե՛ք ձեր ճանապարհները: Լե՛ռը բարձրացե՛ք ու փա՛յտ բերե՛ք և Տունը կառուցե՛ք. հաճույք կստանամ դրանից ու կփառավորվեմ», ասում է Տերը» (Անգե 1:7-8):**

**Տ**եր Հիսուսի ծնունդից ավելի քան 500 տարի առաջ Աստծո ժողովրդին Անգե մարզարեն խիստ հիշեցում տվեց, որ Տիրոջ տան շինարարությունը անտեսվել է: Իրենց անտարբերության մեջ նրանք նույնիսկ քննարկում էին, թե արդյոք ժամանակն է կառուցելու:

Սողոմոնի կողմից կառուցված առաջին տաճարը ավերվել էր, և այժմ, երբ արքայալ ժողովուրդը վերադառնում է իրենց տները, տեսնում է Աստծո տան ավերակները, բայց մարդիկ ծրագրում էին ոչ միայն իրենց սեփական տները կառուցել, այլև զբաղվել իրենց երկրային ճանապարհորդության ընթացքում ունայն ավերորդություններով:

2010 թ.-ի առաջին իսկ միսիոներական ճանապարհորդությունից մինչև այս տարվա սեպտեմբերին տեղի ունեցած միսիոներական վերջին ճանապարհորդությունը, ես հասկացա, որ մեզանից շատերի համար սա հիանալի ժամանակ է կանգ առնելու և որպես հավատացյալներ՝ մեր անձնական ցանկությունների ու նպատակների մասին խորհելու: Հնարավոր է Իսրայելի գավակները կարծում էին, որ գերությունից ազատվելով՝ կարող են իրենց պարզևատրել իրենց իսկ անձնական նախագծերով:

*«Ձեզ համար ժամանակն է արդյոք, որ ձեր ձեղունագարդ տներում բնակվեք, իսկ այս տունն ավերակ մնա» (Անգե 1:4):*

Տերը շարունակում է մեզ դիպչել և հիշեցնել, որ ամեն ինչ Իր «տան», Իր թագավորության և մեր առջև դրված Իր առաջադրանքի մասին է: Արտը իսկապես «սպիտակել է ու պատրաստ է հնձի համար» (Հովհ. 4:35):

Սեպտեմբերի 13-28-ը միսիոներական մեր վերջին ճանապարհորդությունը լի էր հիշեցումներով, որ կենտրոնանանք Տիրոջ վրա և այն մասին, թե ինչպես է Նա մեզ վստահել Ավետարանի տնտեսները լինել: Այն սկսվեց երկօրյա սեմինարով՝ Ավետարանչությունը ժամանակակից աշխարհում խորագրով, որի խոսնակը դոկտոր Ջոնայթան Ջեյմսն էր՝ Ասիայի Ավետարանչական ընկերակցության միջազգային գործադիր նախագահը:

Մոտավորապես 80 անձ, այդ թվում՝ հովիվներ և եկեղեցու առաջնորդներ, քաջալերվեցին Խոսքից, իսկ Ջոնայթանը նաև ուրախություն ունեցավ աղոթելու երեք մարդկանց հետ, ովքեր զգացին Աստծո առաջնորդությունը ծառայություն սկսելու համար:

Միսիոներական այս ճանապարհորդության մեկ այլ կարևոր իրադարձություն էր Հրաչ Գուլյունյան եղբոր ամենօրյա խորհրդածության գրքի շնորհանդեսը: Մեզանից ոմանք գիտեն, որ նա COVID համավարակից ի վեր մի քանի տարի է, ինչ արթնանում է վաղ առավոտ-

յան՝ Տիրոջը սպասելու և աշխարհի հայախոս հավատակիցներին Աստծո Խոսքից քաջալերանք բերելու համար: Մարտունի փափագն էր այս ձայնագրություններից մի քանիսը հավաքել գրքի մեջ: Երևանի «Փարոս» կենտրոնը լեփ-լեցուն էր այս հիշարժան երեկոյի համար: Գրքի տպագրությունը և միջոցառումը Մարտունի, Վարդանի և ACM-ի ամբողջ թիմի կողմից ծրագրված էր անակրճակ կերպով :

Մեր հյուրերը մեզ օրհնեցին վկայություններով և խրախուսական խոսքերով: Դա մի պահ էր՝ հիշելու Աստծո Խոսքի կարևորությունը: Գիրքն արդեն տարածվել է ամբողջ աշխարհում, և շատերը դրական արձագանքներ են տվել:

Միսիոներական այս ճանապարհորդությանը տասներեք հոգի էինք տարբեր երկրներից: Մեր թիմին նվիրվածությամբ և խոնարհությամբ օրհնեցին Երևանի, Շիրակի և այլ փոքր շրջանների հովիվներն ու եկեղեցիները: Մեր ACM աշխատակիցները ևս խորապես ներգրավված էին ծրագրում:

Երբ միսիոներական ճանապարհորդությունն ավարտվեց, ոմանց համար հարց էր. «Ո՞րն է լինելու հաջորդը»:

*«Քննեցե՛ք ձեր ճանապարհները»* կոչը կրկնվում է Անգե 1-ում, և սա այժմեական հրահանգ է մեզ համար ևս՝ քննելու մեր ներսը, քանի որ մենք առաջնահերթություն ենք տալիս մեր կյանքի և մեր ապագայի առջև ծառայած խնդիրներին, երբ ավարտում ենք միսիոներական ճանապարհորդությունը, և ամեն մեկս գնում է իր տուն:

Անգեի ուղերձը հստակ է: Տերը կուրախանա մեզանով, երբ *«բարձրանանք լեռը, փայտ բերենք և տունը կառուցենք»*:

Տերը կփառավորվի հավատքի հենց այս գործողությամբ:

Մեր թիմը կձգտի կապի մեջ լինել միմյանց հետ և շարունակել փոխադարձ խրախուսանքը Տիրոջը ծառայելիս:

Դոկտ.՝ Դանիել Ջեյնս